վարձատրության գումար բռնագանձելու պահանջին՝ Դատարանն, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունից, արձանագրում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, ուստի սույն պարագայում հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, Դատարանը գտնում է, որ Հայցվորի պահանջը՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու մասին, նույնպես ենթակա է մերժման, ուստի այդը հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիա (Երևանի ֆիզկայի ինստիտուտ)» ՀՄԴ-ի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Պոո Ինվեստ» ՍՊԸ-ի՝ թիվ «ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի 1-ին 15-րդ չափաբաժինների մասով սահմանված գնման առարկայի բնութագրերով նախատեսված պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ից հօգուտ «Պոո Ինվեստ» ՍՊԸ-ի բռնագանձել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am